

# ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՆՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

*Կիրակի, 5 Օգոստոս 2018*

*Ե Կիրակի Չկնի Վարդավառի / ԹԻԻ 70*

*Dimanche 5 août 2018*

*5ème Dimanche après la Transfiguration / NO. 70*

*SUNDAY, August 5, 2018*

*5th Sunday After the Feast of Transfiguration/  
NO. 70*

Today's Bible Readings: Isaiah 7.1-9 / 1 Corinthians

13.11-14.5 | Mark 2.1-12 |

*Les lectures de la Bible d'aujourd'hui:*

*Esaïe 7.1-9 / 1 Corinthiens 13.11-14.5 / Mark 2.1-12 /*

*Պատարագիչ՝*

**ԱՐԺ. Տ. ՀԱՅ ԱՐԻ ԲՅՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ**

**Célébrant: PÈRE RÉVÉRANT HAY ARI TANASHIAN**

*Celebrant: REV. FR. HAY ARI TANASHIAN*

*Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan,  
Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan*


*Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian*

*Choirmaster: Mr. Sarkis Barsemian*

*Organist: Mr. Karen Manucharyan*


615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com) | [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)



# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ

7.1-9

**1** Այնպես պատահեցաւ, որ Զրեաստանի Աքազ թագաւորին օրով, որ Յովաթամի որդին էր եւ Ոգիայի թոռը, Ասորիքի Ռասիմ թագաւորը եւ Իսրայելի Փակէէ թագաւորը, որ Ռոմելի որդին էր, Երուսաղէմի դէմ պատերազմելու պատրաստուեցան, որպէսզի պատերազմին անոր դէմ, բայց չկրցան յարձակման անցնիլ:

**2** Երբ Աքազ եւ ամբողջ Զրեաստան լուր առին թէ Ասորիքը Եփրեմի հետ դաշնակցած է, թագաւոր եւ ժողովուրդ իրենց սարսափէն սկսան դողալ, այնպէս ինչպէս անտառին ծառերը կը դողան հովին դիմաց:


**3** Այն ատեն Տէրը Եսայիին ըսաւ. «Ե՛լ, հետդ առ քու տղադ որ Շէար-Եաշուբ կը կոչուի, եւ գնա Աքազի քով: Իրեն պիտի հանդիպիս

թափիչին արտը տանող ճամբուն վրայ,  
ջրանցքի վերին աւազանին քով:

**4** Եւ այսպէս ըսէ իրեն. «Զգո՛յ՛ջ եւ հանդարտ եղիր, տակնուվրայ մի՛ ըլլար ու մի՛ վախնար, Ասորիքի եւ Իսրայելի թագաւորներէն որոնք ծխացող երկու խանձող փայտերու պէս երբ գան իրենց զայրոյթը վրադ թափելու՝ եւ քեզ հարուածեն պիտի փրկեմ:

**5** Ասորիքի եւ Իսրայելի թագաւորները քեզի համար չար ծրագիր մը յղացան եւ ըսին.

**6** «Ելլենք Զրեաստան երթանք, մեր կողմը սիրաշահինք Զրեաստանցիները կամ



բռնադատենք զանոնք եւ անոնց վրայ  
թագաւոր կարգենք Տաբէլի որդին»:

**7** Բայց այսպէս կ'ըսէ Երկնաւոր Չօրքերու Տէրը.  
- Այս ծրագիրը պիտի չիրականանայ բնաւ:

**8** Որովհետեւ ինչպէս Ասորիքի մայրաքաղաքը  
Դամասկոսն է եւ Դամասկոսը կառավարողը  
Ռասինի տունը, այնպէս ալ Իսրայէլի  
մայրաքաղաքը Սամարիան է եւ Սամարիան  
կառավարողը՝ Ռոմէլի որդիին տունը.

**9** Բայց ահա վաթսուևհինգ տարիէն  
Իսրայէլ պիտի կորսնցնէ իր թագաւորութիւնը:  
Դուք ալ, նմանապէս, եթէ Տիրոջ չվստահիք՝  
Դուք ալ պիտի չկարենաք գոյատեւել»:

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՐՆԹԱՑՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ԱՌԱԶԻՆ ՆԱՄԱԿԵՆ 13.11-14.5

**11** Երբ մանուկ էի, մանուկի պէս կը խօսէի, մանուկի պէս կը մտածէի, մանուկի  
կարծիք ունէի. բայց երբ այր մարդ եղայ, մանկական բաները մէկ կողմ դրի:  
**12** Զիմա կը տեսնենք հայելիի մը մէջէն՝ աղօտ կերպով, բայց այն ատեն՝ պիտի  
տեսնենք երես առ երես: Զիմա ես մասամբ կը ճանչնամ, բայց այն ատեն  
պիտի ճանչնամ այնպէս՝ ինչպէս ես ճանչցուած եմ: **13** Իսկ հիմա սա՛ երեքը կը  
մնան՝ հաւատքը, յոյսը, սէրը. բայց սէ՛րն է ասոնց մեծագոյնը:

**14.1** Սիրո՛յ հետամուտ եղէք, ու նախանձախնդի՛ր եղէք հոգեւոր  
պարգեւներու, մա՛նաւանդ՝ մարգարեանալու: **2** Որովհետեւ ա՛ն որ կը խօսի  
անծանօթ լեզուով, կը խօսի ո՛չ թէ մարդոց՝ հապա Աստուծոյ, քանի որ ո՛չ  
մէկը կը հասկնայ զինք. սակայն ան խորհուրդներ կ'արտայայտէ հոգիով:  
**3** Իսկ ա՛ն որ կը մարգարեանայ, կը խօսի մարդո՛ց՝ շինութիւն, յորդոր եւ  
սփոփանք տալու: **4** Ա՛ն որ անծանօթ լեզուով կը խօսի՝ ինքզի՛նք կը շինէ. բայց  
ա՛ն որ կը մարգարեանայ՝ եկեղեցի՛ն կը շինէ: **5** Կ'ուզեմ որ դուք բոլորդ  
լեզուներ խօսիք, մա՛նաւանդ՝ մարգարեանաք. որովհետեւ ա՛ն որ կը  
մարգարեանայ, աւելի մեծ է քան ա՛ն որ լեզուներ կը խօսի, բացի եթէ ինք  
թարգմանէ՝ որպէսզի եկեղեցին շինութիւն ստանայ:

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 2.1-12

**1** Դարձեալ Կափառնայում մտաւ քանի մը օր ետք, եւ լսուեցաւ թէ ան տան մը մէջ **Ե**: **2** Իսկոյն շատ մարդիկ հաւաքուեցան, այնքան՝ որ ա՛լ տեղ չկար, ո՛չ իսկ դրան շուրջ, ու կը քարոզէր անոնց Աստուծոյ խօսքը: **3** Մարդիկ եկան իրեն՝ բերելով չորս հոգիով փոխադրուած անդամալոյծ մը. **4** բայց տեսնելով որ բազմութենէն չէին կրնար մօտենալ անոր, քակեցին տան տանիքը՝ ուր կը գտնուէր Յիսուս, ու ծակ մը բանալով՝ վար իջեցուցին մահիճը, որուն վրայ պառկած էր անդամալոյծը: **5** Յիսուս տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ անդամալոյծին. «Որդեա՛կ, մեղքերդ ներուած են քեզի»: **6** Քանի մը դպիրներ, որ հոն նստած էին, իրենց սիրտերուն մէջ կը մտածէին. **7** «Ինչո՞ւ այս մարդը կ'ըսէ այսպիսի հայիոյութիւններ. ո՞վ կրնայ մեղքերը ներել՝ բացի Աստուծամէ՛»: **8** Յիսուս իսկոյն ըմբռնելով իր հոգիին մէջ՝ որ անոնք այդպէս կը մտածեն իրենք իրենց մէջ, ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս կը մտածէք ձեր սիրտերուն մէջ: **9** Ո՞րը աւելի դիւրին է, “մեղքերդ ներուած են քեզի” ըսե՛լը անդամալոյծին, թէ՛ “ոտքի՛ ելիր, ա՛ն մահիճդ ու քալե՛” ըսելը: **10** Բայց որպէսզի գիտնաք թէ մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը ներելու, (ըսաւ անդամալոյծին.) **11** “Քեզի՛ կ'ըսեմ. “Ոտքի՛ ելիր, ա՛ն մահիճդ ու գնա՛ տունդ.”»: **12** Ան ալ իսկոյն ոտքի ելաւ, եւ առնելով իր մահիճը՝ դուրս ելաւ բոլորին առջեւէն, այնպէս որ բոլորը զմայլեցան, փառաբանեցին Աստուած ու ըսին. «Այսպիսի բան ամենեւին տեսած չէինք»:

## Isaiah

### 7.1-9

**1** When Ahaz son of Jotham, the son of Uzziah, was king of Judah, King Rezin of Aram and Pekah son of Remaliah king of Israel marched up to fight against Jerusalem, but they could not overpower it.

**2** Now the house of David was told, “Aram has allied itself with<sup>a</sup> Ephraim”; so the hearts of Ahaz and his people were shaken, as the trees of the forest are shaken by the wind.

**3** Then the LORD said to Isaiah, “Go out, you and your son Shear-Jashub,<sup>b</sup> to meet Ahaz at the end of the aqueduct of the Upper Pool, on the road to the Launderer’s Field.

**4** Say to him, ‘Be careful, keep calm and don’t be afraid. Do not lose heart because of these two smoldering stubs of firewood—because of the fierce anger of Rezin and Aram and of the son of Remaliah.

**5** Aram, Ephraim and Remaliah's son have plotted your ruin, saying,  
**6** "Let us invade Judah; let us tear it apart and divide it among ourselves and make the son of Tabeel king over it."

**7** Yet this is what the Sovereign LORD says:

"It will not take place,  
it will not happen,

**8** for the head of Aram is Damascus,  
and the head of Damascus is only Rezin.

Within sixty-five years  
Ephraim will be too shattered to be a people.

**9** The head of Ephraim is Samaria,  
and the head of Samaria is only Remaliah's son.  
If you do not stand firm in your faith,  
you will not stand at all. "

## **1 Corinthians**

### **13.11-14.5**

**11** When I was a child, I talked like a child, I thought like a child, I reasoned like a child. When I became a man, I put the ways of childhood behind me. **12** For now we see only a reflection as in a mirror; then we shall see face to face. Now I know in part; then I shall know fully, even as I am fully known.

**13** And now these three remain: faith, hope and love. But the greatest of these is love.

**14.1** Follow the way of love and eagerly desire gifts of the Spirit, especially prophecy. **2** For anyone who speaks in a tongue does not speak to people but to God. Indeed, no one understands them; they utter mysteries by the Spirit. **3** But the one who prophesies speaks to people for their strengthening, encouraging and comfort. **4** Anyone who speaks in a tongue edifies themselves, but the one who prophesies edifies the church. **5** I would like every one of you to speak in tongues, but I would rather have you prophesy. The one who prophesies is greater than the one who speaks in tongues, unless someone interprets, so that the church may be edified.

## MARK

### 2.1-12

**1** A few days later, when Jesus again entered Capernaum, the people heard that he had come home. **2** They gathered in such large numbers that there was no room left, not even outside the door, and he preached the word to them. **3** Some men came, bringing to him a paralyzed man, carried by four of them. **4** Since they could not get him to Jesus because of the crowd, they made an opening in the roof above Jesus by digging through it and then lowered the mat the man was lying on. **5** When Jesus saw their faith, he said to the paralyzed man, “Son, your sins are forgiven.”

**6** Now some teachers of the law were sitting there, thinking to themselves, **7** “Why does this fellow talk like that? He’s blaspheming! Who can forgive sins but God alone?”

**8** Immediately Jesus knew in his spirit that this was what they were thinking in their hearts, and he said to them, “Why are you thinking these things? **9** Which is easier: to say to this paralyzed man, ‘Your sins are forgiven,’ or to say, ‘Get up, take your mat and walk’? **10** But I want you to know that the Son of Man has authority on earth to forgive sins.” So he said to the man, **11** “I tell you, get up, take your mat and go home.” **12** He got up, took his mat and walked out in full view of them all. This amazed everyone, and they praised God, saying, “We have never seen anything like this!”







# Հոգեւոր Հովիւի Խօսքը



**Յանուն Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյն Սրբոյ. Ամէն**

**«Որդեակ, թողեալ լիցին քեզ  
մերք քո» (Մարկ. 2-5)**

**Սիրելի քրիստոսակիր քոյրեր եւ եղբայրներ,**


**Մարկոս աւետարանիչը մեզի կը ներկայացնէ Կափառնայում  
անդամալոյծին բժշկութիւնը:**

**Միայն քանի մը օրեր անց կ'իմանան Կափառնայումցիք , թէ Յիսուս քաղաք  
եկած է: Եւ կը սկսի իրարանցում , ոմանք կը հետեւէին Քրիստոսին  
լրտեսելու, ոմանք ալ՝ բժշկուելու ակնկալութեամբ: Ժամանելէն քանի մը  
օրեր անց, Յիսուս արդէն կը խօսեր, կը վարդապետեր համախմբեալ  
մարդոց, եւ շարք մը դպիրներ, փարիսեցիներ եւ օրէնսգետներ ալ  
կ'ունկնդրէին : Ժողովուրդը լեփ-լեցուն էր, ափ ի բերան եւ խռնուած  
էին մինչեւ դուռը : Միով բանիւ մուտքն ու ելքը գոցուած էր : Գալիլիան  
բժշկութեան համար եկողները մնացած էին յուսահատ , ինչպէս նաեւ  
Երուսաղէմէն մարդիկ կային : Բոլորն ալ այն հաստատ համոզն ունէին,  
թէ՝ *Քրիստոսով յայտնուած զօրութեան համար անհնարին բան չկար :***

**Բժշկութիւն ակնկալողներու մէջ էր նաեւ անդամալոյծ մը , որուն *չորս հոգի*  
պատգարակով բերած էին եւ անշուշտ կ'ուզէին Յիսուսի առջեւը դնել, բայց  
ներս մտնելու հնարաւորութիւն չկար : Ինչպէս կ'երեւի անդամալոյծը մեծ  
կամքի տէր էր եւ ուղեկցողները՝ երբեք չընկրկող անձինք էին : Անշուշտ ,  
կ'երեւի որ անդամալոյծը նշանաւոր կամ ունեւոր անձ մը ըլլալու է, քանի որ  
ունէր հաւատարիմ չորս անձեր: Անոնք ալ հանելով երդիկի երկու փայտերը  
կրցան իջեցնել անդամալոյծը եւ Քրիստոսի ոտքերուն առջեւ դնել : Այս  
նորօրինակ միջադէպը բոլորին մօտ հիացմունք կ'առաջացներ : Յիսուս եւս  
կ'ազդուի հիւանդի անյողդողդ եւ աննկուն կամքէն եւ կը համոզուի անոր  
հաւատքին անսասանութեան մէջ:**

Մեր Տեր Յիսուս Քրիստոս գիտեր ինչպե՞ս եւ ինչո՞ւ անդամալուծութեան օրը հասեր էր անոր, այսինքն որպէս իր մեղքերուն պատիժ, նախ կը կամենայ վերացնել հիւանդութեան սկզբնապատճառը, ուստի քաղցրօրէն կ'ըսէ . «Որդեակ թողեալ լիցին քեզ մեղք քո »: Տեղւոյն վրայ ներկայ դպիրները, փարիսեցիները , օրէնսագետները կը սպասէին, որ մեր Տեր Յիսուս Քրիստոս խօսքով ոտքի պիտի կանգնեցնէ: Այո, *անոնք հրաշքներու ականատես կ'ըլլային, սակայն մեղքերու թողութեան օրինակին առաջին անգամ ըլլալով ներկայ գտնուեցան* , այլայլեցան , գայթակղեցան եւ սկսան մտովի խորհիլ, թէ ուրկե՞տա՞յք եկաւ մեղքերու թողութիւնը : Չե՞ որ այդ Աստուծոյ մենաշնորհն է եւ ոչ ոք չի կրնար այն սեփական եւ անձնական դարձնել: Յիսուս ո՞վ է, որ կը հայհոյէ , ո՞վ է, որ կը յաւակնի Աստուածութեան:

Այ՛ո , այդպէս կը խորհէին անոնք, սակայն բարձրաձայնել չէին համարձակեր: Յիսուս հրեական մտածելակերպը կանխեց ըսելով. «Կ'երեւի որ շփոթեցաք , քանի որ կը կարծէք թէ չեմ կրնա՞ր մեղաց թողութիւն տալ , կարողութիւն չունի՞մ : Արդ ո՞րն է աւելի մեծ եւ աւելի դիւրին, մեղքեր ներելը թէ՞ անդամալոյծին ոտքի կանգնեցնելը:



Ուրեմն , եթէ ոտքի հանեմ անդամալոյծին , պէտք է ընդունի՞ք, որ մեղքերը ներելու խօսքս ալ իրական է ու գործնական : Եւ ճիշդ աւարտելուն պէս Յիսուս կը դառնայ եւ հրամայական շեշտով կ'ըսէ. «Քեզի կ'ըսեմ, վեր կաց , առ մահիճդ եւ տուն գնա »: Եւ ան ոյժ ստանալով իր սրունքներուն եւ միւս անդամներուն վրայ , վեր կը կենայ եւ իր մահիճը կը վերցնէ: *Ուրախ եւ զուարթ հոգիով մաքրուած եւ մարմնով բժշկուած դուրս ելաւ , որպէսզի տուն երթայ այն ճանապարհով, ուրկէ չկրցաւ մտնել:*

Սիրելիներ , շատ կարեւոր հանգամանքի մը մասին կ'ուզեմ խօսիլ, որ այս պատմութեան սկիզբէն Քրիստոս ներեց մեղքերը տեսնելով չորսին հաւատքը , չենք գիտեր եթէ անդամալոյծը կրնար զրուցել Յիսուսին կամ բան մը կրնար խնդրել Իրմէ, *սակայն յայտնի է մնացեալ չորսին հաւատքը* : Արդ, սա խորհուրդ մըն է բոլորիս , որ իրարու համար պիտի աղօթենք , այն մարդիկ որոնք սրբոց բարեխօսութեան հանդէպ որքան դոյզն կասկած ունին թող պահ մը կանգ առնեն եւ նային այս օրինակին :



Եւս մԷկ կարեւոր հանգամանք ,  
որ կ'ուզեմ ընդգծել, այն է, որ հրեական մտածողութեան մէջ  
հիւանդութիւնը մեղքի սկզբնապատճառ էր , ցաւօք սրտի այս օրերուս ալ  
ունիւնք քրիստոնէաներ որոնք այդ մտածումը , ոճը կը կիսեն , սակայն չենք  
կրնար միանշանակ ընդունիլ, թէ ան իր մեղքին հետեւանքն է: Ան կրնայ  
ըլլալ իր ծնողքին մեղքի եւ նաեւ Աստուծոյ փառքին ծառայեցնելու համար ,  
զօր օրինակ կոյրի բժշկումը, քանի որ ան ամենուր կը յայտարարէր, որ  
Աստուծոյ զօրութեամբ էր ինք բժշկուած: *Այսինքն , ի սպառ պիտի վերացնել  
այն կարծրատիպը թէ հիւանդութիւնը մեղքի նշան է, եւ միանշանակ : Ո՛չ եւ  
նորէն ո՛չ :* Այդ կրնայ պատահիլ շատերուս հետ , նոյնիսկ նորածիններու ,  
ուրեմն ի՞նչ պէտք է ըսենք , թէ սա է անոնց վարձքը :

Այս սքանչելի պատմութիւնը լաւ դաս է մեզի համար , որ անսասան  
հաւատքով չորս հոգիները դիմեցին Քրիստոսին : Այնպէս ալ մենք, մեր  
ընկերներուն , հարազատներուն , բարեկամներուն եւ հայրենի երկրին  
զինուորներուն եւ անոնց մայրերուն համար անկասկած, սրտանց եւ  
անվարան հաւատքով պէտք է դիմենք Յիսուսին եւ լիայոյս ըլլանք ,  
որ Տէրը պիտի չ'անտեսէ այլ կը լսէ, կը կատարէ:

*Մեղքեր ներել կը նշանակէ բժշկել հոգեւոր անդամալուծութիւնը :*  
*Անդամալոյծը եկած էր ֆիզիքական բժշկութիւն փնտռելուն համար ,*  
*սակայն Տէրը անոր հոգեւոր մաքրութիւն ալ պարզեց :* Այդ կը նշանակէ ,  
երբ որ մենք մաքուր հաւատքով կը դիմենք եւ կը յարատեւենք խնդրանքին  
մէջ, ապա Աստուած Իր պարգեւներուն բազմապատիկը կու տայ:

Եթէ երբեւէ մենք փճացած հոգիներ ունինք, չլուսահատինք եւ չըսենք թէ ,  
չենք կրնար ձերբազատուիլ այս մեղքերէն : Ամենքս ալ առանց  
բացառութեան հիւանդ ենք սիրելիներ , ամենքս ալ անդամալուծուած ենք  
մեղքով եւ իրական ու իսկական պահն է , որպէսզի անդրադարձ կատարենք  
մեր անդամալոյծ հոգիներուն : Դաւիթ մարգարէն կ'ըսէ. «Մայրս ինձի  
մեղքով ծնաւ »: Սակայն Աստուած տուած է երկրորդ առիթը, որ երկրորդ  
անգամ մենք ծնունդ ունենանք ` կամաւորապէս:

*Ակամայ ծնած ենք ` կամաւորապէս, սակայն Երկնքի արքայութեան դռները  
բաց են, որպէսզի երկրորդ անգամ ծնինք ` հոգեւորապէս:*

Ահաւասիկ սիրելիներ, այսօրուան պատգամը, որ այս անդամալոյծի  
ֆիզիքական վիճակը ճիշդ պատկերն է ու արտացոլանքը մեր հոգեւոր  
կեանքին, մեր հոգեւոր ապրումներուն:

Աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Տէրը իւրաքանչիւրիս պարգեւէ  
իմաստութիւն, սէր, հաւատք, յոյս եւ հաստատուն համոզում, որ Տէրը ներէ  
ամէն տեսակի մեր մեղքերը եւ արժանաբար ըսէ. «Որդեա՛կ, թողեալ լիցին  
մեղք քո»:

Թող երկնաւոր Հօր ողորմութիւնը, Յիսուս Քրիստոսի սէրը եւ Սուրբ Հոգու  
հաղորդութիւնը մեր բոլորին վրայ ըլլան. ամէն:

Օրհնութեամբ՝  
Տէր Դաւիթ Քահանայ Մարգարեան



# ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

## ՅՐԱԺԱՐՈՒՄ



Կը հրաժարի՞նք սատանայէն  
եւ անոր բոլոր տեսակի  
խաբէութիւններէն,  
անոր պատրանքներէն,  
խորհուրդներէն, ճամբաներէն,  
անոր չար կամքէն,  
չար հրեշտակներէն, չար գործակիցներէն,  
անոր չար կամքը կատարողներէն,  
եւ անոր ամբողջ չար զօրութենէն,  
ամբողջութեամբ կը հրաժարի՞նք:

## LE PRIÈRE DE LA SEMAINE

### LA RENONCIATION

Nous renonçons à Satan  
et à toutes ses séductions,  
à ses conseils,  
à ses œuvres,  
à son mauvais vouloir,  
à ses mauvais anges,  
à ses mauvais serviteurs,  
à ceux qui font ses volontés mauvaises,  
et à toutes ses forces malignes,  
nous y renonçons vraiment.





## Շաբթուայ Եկեղեցական Տօնացոյցը

### Օգոստոս - Août

6, Երկուշաբթի - Ա. օր Աստուածածնի պահոց

*Lundi 6 - 1<sup>er</sup> jour du jeûne de l'Assomption*

7, Երեքշաբթի – Բ. օր Աստուածածնի պահոց

*Mardi 7 – 2<sup>ème</sup> jour du jeûne de l'Assomption*

8, Չորեքշաբթի – Գ. օր Աստուածածնի պահոց

*Mercredi 7 – 3<sup>ème</sup> jour du jeûne de l'Assomption*

9, Հինգշաբթի – Դ. օր Աստուածածնի պահոց

*Jeudi 9 - 4<sup>ème</sup> jour du jeûne de l'Assomption*

10, Ուրբաթ - Ե. Օր Աստուածածնի պահոց

*Vendredi 10 - 5<sup>ème</sup> jour du jeûne de l'Assomption*

11, Շաբաթ – Տօն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի ըստ Տեալեան  
Սրբոյն Գրիգորի Լուսաւիրչին

*Samedi 11 – Fete de Choghagat de St. Etchmiadzine selon la vision  
de St. Gregoire l'Illuminateur*



12 Կիրակի - ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Օրհնութիւն Խաղողոյ

*Dimanche 12 – Assomption de la Sainte Vierge*

*Bénédiction du raisin*



13 Երկուշաբթի – Յիշատակ Մեռելոց

Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց

Lundi 13 – Office de Requiem pour tous les défunts

# ՏՈՆԵՐ

Շաբաթ, 11 Օգոստոս 2018

## Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի

Ս. Աստուածածնի վերափոխման տօնի Կիրակիին նախորդող Շաբաթ օրը Հայ Եկեղեցին կը նշէ Շողակաթի տօնը: Ան կը հանդիսանայ Վերափոխման նաւակատիքը, քանի որ Քրիստոսի շնորհընկալ մայրը՝ սուրբ Եկեղեցին, ամէն օր կը ծնանի Քրիստոսին իր սրտին մէջ՝ սուրբ Սեղանին վրայ, այդ պատճառով ալ Սուրբ Գրիգորի կողմէ Սուրբ Էջմիածնի տաճարին անագ խորանը Աստուածածին կը կոչուէր:



«Տեսայ մարդկային ահաւոր կերպարանք մը, բարձր ու ահեղ, որ առջեւէն կ'ընթանայ եւ վերէն մինչեւ ներքեւ վայրէջքի առաջապահն էր: Ան ձեռքին ունէր ոսկիէ մեծ մուրճ մը, եւ բոլորը Անոր ետեւէն կու գային: Ինքը կու գար սլանալով, խոյանալով արագաթել արծիւի նմանութեամբ ու իջաւ հասաւ մինչեւ երկրին յատակը, քաղաքին մէջտեղը, խփեց լայնատարած գետնին, որմէ մեծ ու անչափ թնդիւններ հնչեցին անդունդներու սանդարամետէն: Ամբողջ երեւցող երկիրը, աչքին տեսանելի ըլլալու չափ, յարդ հաւասար դաշտաձեւ տափակցաւ: Եւ տեսայ քաղաքին մէջ, արքունի ապարանքին մօտ, ճախարակաձեւ ոսկիէ խարիսխ, խոշոր բլուրի մեծութեամբ եւ անոր վրայ յոյժ բարձր հրեղէն սիւն, իսկ վրան՝ ամպէ խոյակ՝ լուսեղէն խաչով:

Նայեցայ եւ տեսայ երեք այլ խարիսխներ. մէկը այն տեղը, ուր նահատակուեցաւ Ս. Գայանէն՝ երկու ընկերներու հետ, միւսը այն տեղը, ուր Ս. Հռիփսիմէն նահատակուեցաւ երեսուներկու ընկերներու հետ եւ մէկն ալ՝ հնձանին տեղը: Այդ խարիսխները կարմիր էին արեան գոյնով, սիւները ամպեղէն էին, եւ խոյակները՝ հրեղէն»: Այսպէս գրած է Ագաթանգեղոսը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տեսիլքին մասին:

Սուրբին այս տեսիլքը կը կոչուի «Շողակաթ»՝ ի պատիւ այն լոյսին, որուն Լուսաւորիչը կ'արժանանայ տեսնել երկինքէն կաթող շողի տեսքով:



Այսպես պատմութենէն մեզի յայտնի կը դառնայ, թէ ինչպէս կառուցուեցաւ Շողակաթ եկեղեցին, ուր կը գտնուին Ս. Մարիանէ կոյսին մասունքները: Ան Յռիփսիմեանց կոյսերէն էր, որոնք փախչելով Յռոմի կայսր Դիոկղետիանոսէն բնակութիւն կը հաստատեն Յայոց մայրաքաղաք Վաղարշապատի մէջ եւ կը նահատակուին յանուն հաւատքի: Անոնց նահատակութեան վայրերուն մէջ հետագային ըստ Լուսաւորչի տեսիլքին, Տրդատ Գ-ի օգնութեամբ կը կառուցուի երեք մատուռ. առաջինը՝ Սուրբ Յռիփսիմէի գերեզմանին վրայ, երկրորդը՝ Սուրբ Գայանէի, եւ երրորդը՝ հնձանի վայրը՝ այն կոյսի գերեզմանին վրայ, որ հիւանդութեան պատճառով չկարողացաւ միանալ Յռիփսիմէի մարմնին թաղման, գնաց քոյրերուն քով եւ մնաց հնձանի վայրին մէջ ու այնտեղ ալ նահատակուեցաւ:

Լուսաւորչի տեսիլքին լոյսով Յայ Առաքելական եկեղեցին հաստատած է երկու կարեւոր տօն. առաջինը՝ «Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի», որ կը կատարուի Յոգեգալուստէն երկու Կիրակի անց, երկրորդը՝ «Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի»՝ Յոգեգալուստէն 11 օր անց՝ Աստուածածնի Վերափոխման տօնին նախորդող Շաբաթ օրը եւ կը հանդիսանայ Վերափոխման նաւակատիքը:

Ս. Շողակաթ վանքը կառուցուած է 18-րդ դարուն Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսին օրով եւ Ս. Գայանէ ու Ս. Յռիփսիմէ եկեղեցիներուն հետ միասին մինչ օրս կը յամարուի նուիրական Սրբատեղի, ուր բազմաթիւ հրաշքներ ու բժշկութիւններ կը կատարուին:

**Յինգշաբթի, 2 Օգոստոս 2018**

**Ս. վկաներ Եւգէնիոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կանդիտոսի ու Ակիւղասի Յիշատակութեան Օր**

Քրիստոնէութեան արագ տարածումը յատկապէս Յռովմէական կայսրութեան սահմաններուն մէջ արդէն երկրորդ դարէն անհանգստացուցած էր կայսրերը:

Յրապարակուեցան կայսերական հրովարտակներ, որոնցմով կը

հրահանգուէր կամ հեթանոսութեան

դարձնել քրիստոնեաներուն կամ ալ հալածել մինչեւ մահ:



Հալածանքներու այդ ժամանակաշրջանին բազմաթիւ քրիստոնեաներ կը նախընտրէին մեռնիլ, քան ուրանալ Քրիստոսին: Եկեղեցին մեծապէս կը գնահատէ յանուն Քրիստոսի այդ մարդոց կրած չարչարանքները, անոնց համարձակութիւնն ու հաւատքը: Այդպիսի վկաներ են Հովիհանոս Ուրացոյ կայսրի օրերուն նահատակուած Եւգէնիոսն ու Մակարիոսը, Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս կայսրերու օրերուն նահատակուած Վաղերիոսը, Կանդիտոսն ու Ակիւղասը: Տօներ կարգելով ի յիշատակ այդ նահատակներուն, Եկեղեցին կ'ուսուցանէ հաւատացեալներուն հաւատարիմ մնալ Քրիստոսին նոյնիսկ ամենադժուարին պայմաններուն մէջ:

Շաբաթ, 4 Օգոստոս 2018

**Եփեսոսի Ա ժողովի 200**

**Հայրապետներու**

**Յիշատակութեան Օր**

Եփեսոսի ժողովը տեղի ունեցած է 431 թուականին Թեոդոսիոս Փոքր կայսրի օրերուն, 200 հայրերու մասնակցութեամբ, որոնք հաւաքուած էին՝ քննելու Կ. Պոլսոյ Պատրիարք Նեստորի սխալ ուսմունքը: Այս ուսմունքին համաձայն՝ Յիսուս Քրիստոսի մէջ գոյութիւն ունէին 2 անկախ, մէկը միւսին հակադիր բնութիւններ՝

աստուածային եւ մարդկային: Նեստորը կը քարոզէր, որ Քրիստոս ծնած է որպէս հասարակ մարդ, ապա Աստուածութիւնը բնակած է անոր անձին մէջ, հետեւաբար Ս. Կոյս Մարիամը ոչ թէ Աստուածածին է, այլ մարդածին: Եփեսոսի ժողովը կը դատապարտէ Նեստորի վարդապետութիւնը եւ կ'ընդունի Ս. Կիւրեղ Ալեքսանդրացիին ուսմունքը որպէս ուղղափառ դաւանութիւն, որուն համաձայն Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւնները գոյութիւն չունին առանձին-առանձին, այլ միաւորուած են անշփոթ, անխառն կերպով. մէկ Տէր, մէկ Յիսուս, մէկ դէմք եւ միացեալ աստուածամարդկային բնութիւն: Ս. Մարիամը ոչ թէ մարդածին է, այլ Աստուածածին, քանի որ ան ծնեցուց Աստուծոյ Որդին: Կը հռչակուի Ս. Կիւրեղ Ալեքսանդրացիի «Մի է բնութիւն բանին մարմնացելոյ» բանաձեւը: Հայ Եկեղեցին մասնակցած չէ այս տիեզերական ժողովին, սակայն նախորդ տիեզերական ժողովներուն հետ ընդունած է անոր որոշումներն ու տիեզերական հեղինակութիւնը:



# Holidays

**Thursday, August 2, 2018**

## **Commemoration of Martyrs Sts. Eugenios, Makarios, Valerios, Canditos and Akyoughas**

The quick spreading of Christianity especially on the territory of the Roman Empire since the 3rd century started to worry the kings. Royal charters were issued ordering the Christians to adopt the heathen religion, otherwise they should be persecuted to death. During that period of persecutions any Christians preferred to die than to Betray Jesus Christ. The Church always appreciated the torments of the people for the sake of Christ, their courage and strength of their faith. Among such people are the martyrs Eugenios and Makarios, martyred during the reign of the King Julianos the Betrayer. Martyrs Valerios, Canditos and Akyoughas have been martyred during the reign of the Kings Dioclethianus and Maximianus.

Commemorating the martyrs' memory, the Church teaches the faithful to remain loyal to Christ even under most severe circumstances.



**Saturday, August 4, 2018**

## **Commemoration Day of 200 Pontiffs participating in the Ecumenical Council of Ephesus**


The Ecumenical Council of Ephesus was convened in 431 A. D., during the reign of the King Theodosius Small. 200 Pontiffs participated in the Council with the goal to criticize the false teaching of Nestorius, Patriarch of Constantinople. According to his teaching there were two independent - divine and human natures in Christ, contrasting each other. Nestorius preached that Christ was born as a simple man and only later Divinity was settled in His Person, and therefore, the Holy Virgin Mary was not Godmother, but the mother of a simple man.



The Ecumenical Council of Ephesus condemns the teaching of Nestorius and adopts the teaching of St. Cyril of Alexandria as an orthodox teaching, according to which the divine and human natures of

Christ do not exist separately, but are united unmixedly, without confusion - one Lord, one Jesus, one face and one united divine and human nature. St. Mary is not the mother of a simple man, but she is Godmother as she gave birth to the Son of God. So, the formulation of St. Cyril of Alexandria: "One is the nature of the Incarnate Word of God" was adopted.

The Armenian Church has not participated in that Ecumenical Council but has adopted its resolutions and ecumenical authority together with the previous Ecumenical Councils.





# ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal***

***Donations of July 2018  
have been received with great appreciation***



**Mr. & Mrs. Arman Oduncuoglu \$200, Mr. Berdj Basmadjian \$100,  
Mr. Apraham Damirjian \$50,  
Mrs. Armine Boghigian \$30, Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$25**

**FOR A VOW:**

**Mr. Garabed Azarian \$20**

**Get well soon wishes  
for Aret Met recovery from his Parents:  
Mr. & Mrs. Hazar & Hasmig Met \$50**

**“GOMIDAS”**

**TBRATZ TASS 60<sup>th</sup> ANNIVERSARY:**

**Mr. Krikor Marounian \$250**

**RENOVATION FUND:**

**Mr. Berdj Basmadjian \$300**



**IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:  
THE LATE SONA ANNIE KALEMJIAN MANOUKIAN**

**Mr. Arto Manoukian \$500**

**HOKEHANKISD:  
THE LATE AVEDIS MISSISSIAN**

**Mr. Joe Morena \$500**

**THE LATE YEGHISAPET OZOGLU**

**Mr. Vrej Nigogossian, Dr. & Mrs. Armen & Ani Parunak \$100,  
Mr. & Mrs. Hazar & Hasmig Met, Mr. & Mrs. Krikor Arslan,  
Mr. & Mrs. Dikran & Rima Derderyan,  
Mr. & Mrs. Alain Dertadian, Mrs. Emma Kaloustian,  
Mrs. Dirouhi Dertadian \$50, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy,  
\$40, Mr. & Mrs. Avedis & Mary Basmajyan,  
Mr. & Mrs. Berc & Emma Essen Essen \$30, Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian,  
Mr. & Mrs. Martin & Sossie Marasliyan, Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan  
\$25, Mr. & Mrs. Krikor & Rose Dikranian, Mr. & Mrs. Apraham & Hilda Cakar,  
Mrs. Silva Tursucu \$20, Mr. Sarkis Koushagjian \$15**

**THE LATE HILDA MAMOURIAN**

**Mr. & Mrs. Arsene-Noubar & Lucy Mamourian \$100,  
Mr. & Mrs. Garabed Tashdjian \$50, Mrs. Serpouhi Toukhmanian,  
Mr. & Mrs. Joseph & Marie Kazandjian \$25,  
Mrs. Sonya Djandjikian \$20**

**THE LATE VARTOUHIE-ROSE MELDONIAN**

**Mrs. Liliane Kupelian \$50, Mrs. Anoush Doghramadjian \$40,  
Mr. & Mrs. Antranig Kasnakian \$20**

**THE LATE VIVIANE TACHDJIAN**

**Mr. & Mrs. Jean - Philippe & Aline Tachdjian \$100, Mrs. Anahid Seropian \$25**

**THE LATE GURNAGUL FAMILY**

**Mr. Sarkis Gurnagul \$75**

**THE LATE ANNIE KALEMJIAN MANOUKIAN**

**Mr. Berdge Manoukian \$200, Mrs. Aline Ajamian \$100,  
Mr. Ara Nahabedian \$50**

**THE LATE TAKOUHIE AJAMIAN**  
**Mrs. Aline Ajamian \$200**

**THE LATE BEDROS JAMGOTCHIAN**  
**Mr. & Mrs. Manouk & Siran Jamgotchian \$100**

**THE LATE PERGRUHI COMELEKCIOGLU**  
**Mr. Arto Comelekcioglu \$50**





## **Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներու**

**Վերափոխումն Ա. Աստուածածնի –  
Խաղողօրհնէք – Կիրակի, 12 Օգոստոս 2018  
Խաչվերաց – Կիրակի, 16 Սեպտեմբեր 2017  
Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ 28, 2018  
Մանուկներու Ա. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018  
Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 48-րդ Տարեդարձ –  
Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018**

### **FEAST DAYS AND UPCOMING EVENTS**

**Feast of the Assumption of the Holy Mother of God -  
Sunday, August 12th, 2018  
Feast of the Exaltation of the Holy Cross –  
Sunday, Sept. 16th, 2018  
Annual Bazaar – Saturday & Sunday -  
October 27 & 28, 2018  
Children's Christmas /CFFA –  
Sunday, December 2nd, 2018  
Church 48<sup>th</sup> Anniversary –  
Sunday, December 9<sup>th</sup>, 2018**



# Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի  
կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր  
տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան  
(514) 279-3066, մեր հաղորդակցութիւնները կարենալ  
պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ  
այժմեական ընթացքի մէջ:  
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

*Ծիսական Խորհուրդ*

## **Attention to our beloved parishioners,**


**If you have changes in your address, e-mail or phone numbers  
please feel free to convey your new data to the Church office at  
(514) 279-3066, to maintain our communication in a regular,  
continuous, and up-to-date course.**

**Thank you for your cooperation.**

*Parish Council*

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

**ԿԻՐԱԿԻ, 5 Օգոստոս 2018**



Պրն. Արթուր Զեօմլեքճիօղլուի,  
Տիկ. Մայտա Զեօմլեքճիօղլուի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ մօր`

**ԲԵՐԿՐՈՒՅԻ ԶԵՕՍԼԵՔՃԻՕՂԼՈՒԻ  
(PERGRUHI COMLEKCIOGLU)**

Հոգևոյն ի հանգիստ  
(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)







# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ

## 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Չեռնարկ
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխումն Ս. Աստուածածնի» Խաղողօրհնէք Աւարտին ճաշկերոյթ Եկեղեցւոյ շրջափակին մէջ
	13, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
Սեպտեմբեր	16, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	17, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պազար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ

	9, Կիրակի	Եկեղեցւոյ Օճման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



## **Գրաւուած Օր**

**«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի  
Յիմնադրութեան 60 Ամեակի**

**Յանդիսութիւն**

**10 Նոյեմբեր 2018, Շաբաթ երեկոյեան**

**Կը խնդրուի չխաչաձեւել:**

**Մանրամասնութիւնները յաջորդիւ:**

**Շնորհակալութիւն  
Ծիսական Խորհուրդ**



## Յայտարարուժիւն

Միքելի հաւատացեալներ կը փափաքինք տեղեկացնել ձեզ թէ յետայսու Ծիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, Ծիական Խորհուրդը մեր հաւատացեալներուն պիտի յատկացնէ առիթը խորհրդակցական հանդիպում մը ունենալու Ծիական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝  
Ծիական Խորհուրդ  
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ



# SOL



**ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ  
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

**FÊTE A L'ASSOMPTION DE LA SAINTE VIERGE  
ET BÉNÉDICTION DU RAISIN**

**ՏԱՂԱԿԱՐ ՏՕՆԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ  
LA SAINTE MESSE DE LA FÊTE MAJEUR**

**Կիրակի, 12 Օգոստոս 2018**

**Dimanche, 12 août 2018**

Առաւօտեան ժամերգութիւն	09:30	Matines à	09:30
Սուրբ Պատարագ	10:30	Sainte Messe	10:30
Օրհնութիւն Խաղողոյ	12 – 12:30	Bénédition du raisin	12 -12 :30

Պատարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ՀԱՅ ԱՐԻ ԲՅՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ**

Célébrant

**REV. PÈRE HAY ARI TANASHIAN**

**Ս. Պատարագի երգեցողութիւնը պիտի  
կատարէ «Կոմիտաս» Դպրաց Դասը:**

- **Յաւարտ Ս. Պատարագի  
նախաձեռնութեամբ՝ Ծիական  
Խորհուրդի Խորովածի  
Սպասարկութիւն**

ԵՆ

- **«Անուշեղէնի Վաճառք»  
կազմակերպութեամբ՝ Տիկնանց  
Յանձնախումբի Եկեղեցւոյ պարտեզին մէջ:**
- A l'issue de la Bénédiction du raisin, le service de B.B.Q, organisé par le Conseil Paroissial
- Ventes de pâtisserie, par des dames auxiliaires de l'église.

Մուտքի Ծուրճ՝ \$20 / Entrée \$20

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal







Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Մանկական Երաժշտական Խումբ



Jeunesse  
Musicale St-Grégoire d'Outremont

**Nouveau développement pour la Chorale des Enfants  
Մանկական Նոր Երգչախումբի Վերսկսում**

Փորձերը կը վերսկսին  
Կիրակի, 16 Սեպտեմբեր 2018-Էն սկսեալ  
La nouvelle saison débutera  
le Dimanche, 16 septembre 2018.

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ հաստատել  
Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:  
Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de  
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորթաները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.



**Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ  
Prêtre Curé & Conseil Paroissial**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/  
Fax: (514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ ՀՈԳԵԻՈՐ ԶՐՈՅՑ

Տ. ԴԱԿԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ  
ՀԵՏ

*BIBLE STUDY & INTERESTING  
DISCUSSIONS*

**BY FR. DAVID MARGARYAN**

Տեղի պիտի ունենան սկսեալ Սեպտեմբեր 2018-Էն,  
Հինգշաբթի՝ Երեկոները ժամը 7-ին  
Եկեղեցւոյ մէջ

They will be held starting in  
September 2018, every Thursday  
at 7:00 pm at the Church

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները  
մասնակից ըլլալու  
Տ. Դակիթ Քհնյ. Մարգարեանի՝  
ներկայացուցած Աստուածաշնչական նիւթերուն:

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն**

We invite all our beloved faithful to be present  
to the bible sessions with spectacular biblical  
subjects that will be presented  
by Fr. David Margaryan.

**Coffee and tea will be  
served during the sessions.**

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին  
ներկայութիւնը:

**Cordially we expect everyone's presence.**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-  
8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal